

5.3. 2010թ. մայիս ամսվա հիդրոոդերնությամբ անվանված վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերնությամբ անվանված վիճակների և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, մայիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմային մոտ, Արարատյան դաշտավայրում՝ նորմայից ցածր 1 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-2 աստիճանով, երկրորդում՝ բարձր 1-2 աստիճանով (Արարատյան դաշտավայրում՝ նորմային մոտ բացասական շեղումով), երրորդում՝ նորմային մոտ բացասական շեղումով (Արարատյան դաշտավայրում՝ նորմայից ցածր 2 աստիճանով):

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում կազմել է +23 +24°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +20 +22°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +17 +20°C, լեռնային շրջաններում՝ +14 +17°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է ամսվա երկրորդ կեսին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +26 +30°C, (ք.Մեղրիում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 34°C), ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրում +25 +29°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +22 +26°C, լեռնային շրջաններում՝ +18 +23°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է +2 +6°C, ՀՀ Լոռու մարզում +5 +6°C, Սյունիքի նախալեռներում՝ +6 +8°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +6 +11°C, Արարատյան դաշտավայրում՝ +10 +12°C, Սյունիքի հովիտներում՝ +11 +14°C:

Ամենացածր ջերմաստիճանը լեռնային շրջաններում գրանցվել է -2 +3°C (Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -4°C), ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ 0 +5°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +3 +8°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +7 +12°C:

Մայիս ամսվա ընթացքում տեղումների քանակը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր: Արարատյան դաշտավայրում այն կազմել է նորմայի 160-230%-ը, ՀՀ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում՝ 110-140% (ք.Մեղրիում՝ 180%), ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ 70-100%:

Մայիսի գրեթե բոլոր օրերին դիտվել են տեղումներ և ամպրոպ: Մայիսի 12-ին Արարատյան դաշտավայրում դիտվել է ուժեղ անձրև՝ 27-47 մմ/12 ժամ: Մայիսի 9-ին Բաղրամյան գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ), 13-ին ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ), 13-ին և 26-ին ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ) դիտվել է կարկուտ 2-22 մմ տրամագծով:

Մայիսի 11-ին, 13-15-ին, 17-24-ին և 27-28-ին առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 8-19 մ/վրկ, պոռթկումները՝ 15-32 մ/վրկ:

Մայիսի 1-ին ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ), 1-ին և 7-ին ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ), 7-ին ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ), 11-ին Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ) և Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ) դիտվել է մառախուղ 100-500 մ տեսանելիությամբ:

Մայիսի 31-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը պահպանվել է 3000 մ և ավելի բարձրությունների վրա և Արագած բարձր լեռնային կայանում կազմել 208 սմ:

Մայիսին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 120-160%-ը:

Սևանա լճի մակարդակը մայիս ամսվա ընթացքում բարձրացել է 27 սմ-ով և 2010թ. մայիսի 31-ի դրությամբ կազմել 1899.90 մ, որը 2009թ. նույն օրվա համեմատ բարձր է 66 սմ-ով: